



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԿՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՋԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՋԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԸ
ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՍԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԶԱ

ՋԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵԳՆԱԶԱՆ

ՀՀ Արմավկիի մարզի Բամբակաշատ գյուղի միջնակարգ
դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Ռ.Աղաջանյան

ԱՐՄԱՎԻՐ-2022

Բովանդակություն

1. Նախաբան
2. Ինտեգրված դասի կառուցվածքը ,խնդիրները նպատակները
3. Սեփական փարձառության ներկայացում
4. Եզրակացություն

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՁԱ

Նախաբան

Ինտեգրված դասը ժամանակակից մեթոդիկայի նորույթներից մեկն է: Ինտեգրված դասի միջոցով արտահայտվում են միջառարկայական կապերը: Այն կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: Իհարկե, ինտեգրված դասերը բազմակողմանի գիտելիքներ են ապահովում, հետաքրքիր ու բովանդակակալից են դարձնում ուսումնական գործընթացը: Ինտեգրացված դասերը հանրային կրթության ձևերից մեկն է: Այն իրականացնելու համար պահանջվում են նախապատրաստական լուրջ ջանքեր, սակայն փորձը ցույց է տվել, որ այդ դասերի արդյունավետությունը բավականին բարձր է: Հիմնականում երկու փոխկապակցված առարկաների դասի ընթացքում՝ 45րոպե ունենում ենք աշխատող, ներդաշնակ սովորողներ: Որո՞նք են ինտեգրված դասի առավելությունները, և պե՞տք է այսօր սովորողին դասաժամի այդ ձևը: «Ինտեգրում բառը նկատի ունենք տարբեր առարկաների, ուսումնական նյութերի մեջ մի ամբողջություն՝ փոխադարձ իրար լրացնող՝ և՛ իմաստով, և՛ ձևով: Այն չափազանց գրավիչ ձև է սովորողների համար, սովորողին տալիս է լիարժեք պատկերացում նյութի վերաբերյալ: Դա երկու նյութի խաչմերուկ է, որին հետևում է վերելքը, ապա՝ գագաթը՝ նպատակային դասը»>>(Ս.Խաչատրյան; Ուսուցման արդյունավետ հնարներ էջ 16):

Ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեությունում: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգևածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն, աշխույժ: Ինտեգրված հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու դասերը հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծականությունը, հետազոտական աշխատանքը

Բացի վերը նշվածից, այս տեսակ դասերը ստեղծագործ ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ ,իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու հնարավորություն ստեղծել: Ընդ որում, ուսումնական նյութերը

մարդկային դրսևորման հիմք կարող են հանդիսանալ: Այն նպատակ ունի նաև ուսուցչին օգնել հարմարվելու վառ, աշխույժ, անհատական հետաքրքրություններով լի սովորողին, մի կողմից էլ՝ շատ է օգնում նախագծերով աշխատող ուսուցիչներին: Ինտեգրված դասի արդյունքում սովորողը, ոչ ստիպողաբար, տանը կատարում է առաջադրանքներ, հետազոտում է, ապա ներկայացնում դպրոցում, որը խրախուսվում է: Այստեղ սովորողին չես պարտադրում կատարել, նա այն անում է ինքնակամ, հաճույքով:

Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջությունն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև ինդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն : Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) ծրագրերի հետևյալ տեսակները.

- միջառարկայական (interdisciplinary),
- բազմառարկայական (multidisciplinary),
- անդրառարկայական (trans disciplinary) :

Որպես միավորող առանցք՝ հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընգրկում է մի քանի առարկա: 70-80-ական թվականներին ի հայտ եկան միջառարկայական կապերի և ուսուցման գործընթացում դրանց գործնական կիրառության յուրահատուկ դրսևորումներ՝ դասերի նորտիպեր, մասնավորապես՝ ինտեգրված դասեր, որոնք այլ կերպ կոչվեցին բիևար, սինթետիկ, համատեղ դասեր: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի

խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներն ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Սակայն ինտեգրված դասեր ուսուցիչներն այդքան էլ հաճախ չեն կիրառում: Դրանք հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում

1. երբ հայտնաբերվում են միևնույն նյութի կրկնությունը տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում,
2. թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից,
3. այնպիսի ընդհանրացված հասկացությունների (շարժում, ժամանակ, զարգացում, մեծություն և այլն), օրենքների, սկզբունքների ուսումնասիրության ժամանակ, որոնք ներառում են մարդկային կյանքի և գործունեության ամենատարբեր ասպեկտներ,
4. երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրի շրջանակներից,
5. առարկայի դասավանդման ժամանակ պրոբլեմադիր և զարգացնող ուսուցում իրականացնելու ժամանակ:
6. Ինտեգրված առարկաների միջև խաչվող հասկացությունների առկայության դեպքում
7. Տարբեր առարկաների տեսանկյունից նույն երևույթի կամ օրինաչափության ուսումնասիրության առումով հակասությունների առկայության դեպքում:
8. Երբ նպատակ ունեք ուսումնասիրվող երևույթը հետազոտել և ներկայացնել առավել լայն շրջանակներում, որը դուրս է դասավանդվող առարկայի սահմաններից:
9. Երբ նպատակ ունեք մշակելու պրոբլեմային ուսուցման մեթոդ;

Իհարկե, կան նաև ինտեգրված դասերի կիրառման այլ դրդապատճառներ: Մինչ ինտեգրված դաս անցկացնելը ուսուցիչը նախ դիմում է իր այն կոլեգային, ում դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր առարկայի հետ: Երկու ուսուցիչներ

պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Ինտեգրված դասի ամենախոցելի տեղը ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումն է. նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության ու ընթացքի արդյունավետ ապահովումը: Ընդ որում նրանց փոխհարաբերությունները կարող են տարբեր լինել. յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք կամ նրանցից մեկը հանդես է գալիս որպես առաջատար, իսկ մյուսը՝ խորհրդատու, կամ ամբողջ դասը կարող է վարել ուսուցիչներից մեկը, իսկ մյուսները պարզապես խաղան ակտիվ հյուրի դեր: Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը: Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Օրինակ՝ երբ վերցնում են բովանդակությունը, ապա ինտեգրման համար առանձնանցվում է բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն: Կարելի է ինտեգրել նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մտավոր և գործնական կարողություններն ու հմտությունները: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Համակարգ ձևավորելը դառնում է դասի կազմակերպման կարևորագույն մասը, քանի որ հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդման մեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է

1. ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը,
2. համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը,

3. ինտեգրման ձևը

4. միավորվող նյութերի միջև կապերի բնույթը

5. նյութի հաջորդականության կառուցվածքը

6. նյութի ներկայացման միջոցները

7. դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև,

8. տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները :

Պարզ և հստակ ձևակերպելով դասի **նպատակը**՝ ուսուցիչը հավաքում է մեկ դասում միավորվող ուսումնական նյութը, այսինքն՝ որոշում է ինտեգրման բաղադրիչները: Դա արվում է համագործակցող ուսուցչի հետ: Այս փուլում հավաքվում են միայն ուսումնական թեմաներն ու դրանց առանձին մասերը, որոնք պետք է կազմեն ինտեգրման բովանդակային հիմքը: Այստեղ դրսևորվում է նաև ինտեգրմանը մասնակցող ուսուցիչների փոխհամաձայնությունը: Ապա երկու ուսուցիչ սկսում են վերլուծել ընտրված նյութը և բաժանում են այն երկու մասի՝ հիմնական և օժանդակ: Հիմնական նյութը դառնում է դասի՝ համակարգ ձևավորող բաղադրիչը: Որպես համակարգ ձևավորող բաղադրիչ՝ կարող է հանդես գալ ինտեգրվող բովանդակության միայն այն հատվածը, որը որոշվում է առաջադրանքի նպատակով: Որպես այդպիսի բաղադրիչներ՝ կարող են լինել առանձին հասկացություններ, օրենքներ, մտքեր, ուսուցման մեթոդներ և միջոցներ: Համակարգ ձևավորող բաղադրիչի առանձնացումը կարևորվում է նրանով, որ հենց դրանով է որոշվում ինտեգրվող նյութը, որպեսզի այն մատուցվի ամբողջովին, որպեսզի պարզ բացատրվեն կամ պարզվեն դրա ի հայտ գալու պատճառները: Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից: Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը (հավասարապես ինտեգրվում են երկու կամ ավելի առարկաներ, ինտեգրման ժամանակ գերակայությունը տրվում է մեկ առարկայի, իսկ մյուսը դառնում է օժանդակ, օգնող առարկա և այլն), կազմվում է դասի պլանը, որոշվում է դասի տևողությունը (45 րոպե, 90 – 405 – րոպե): Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը, պարզորոշ ընդգծվում են առաջատար և օժանդակ առարկաները: Ինտեգրված դասն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ

պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշչի եռամսկարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը:

Ուսուցիչների միասին աշխատելու ձևերը ինտեգրված դասին

Ադիտիվ- ուսուցիչներն աշխատում են հաջորդելով միմյանց

Ադիտիվ լրացումներով- մի ուսուցիչն անցկացնում է պարապմունքը, մյուսը լրացնում է նրան :

Ինտեգրված- ուսուցիչներն աշխատում են գուգահեռ

Ինտեգրված, բաշխված դերերով- Երկու ուսուցիչներ աշխատում են միաժամանակ, որոնցից յուրաքանչյուրը ուշադրության կենտրոնում է պահում իր թեմայի բովանդակությունը

Միջառարկայական դասեր կազմակերպելու հիմնական նպատակները

Չարգացնել ուսումնառության հմտությունների խոր ընկալում և դրանց կիրառումը կենսական կարևորության բնագավառներում:

Միավորել առարկաները խաչվող հասկացությունների շուրջ, սովորել և հետազոտել տարբեր առարկաների դասավանդման մոտեցումները:

- ✓ **Ուսումնասիրել** արդի ինդիքները, գաղափարներն ու մարտահրավերները՝ ստեղծելով նոր արտադրանք կամ բացատրելով երևույթները:
- ✓ **Յասկանալ** միջառարկայական ուսուցման գործընթացի տրամաբանությունը:
- ✓ **Չգալ** հայտնագործելու բերկրանքը՝ հասկանալով, թե ինչպես են առարկաները լրացնում և մարտահրավերներ նետում միմյանց

Ինտեգրման ձևերը՝

Աշխարհայացքային- կիրառվում է գիտության կողմից ուսումնասիրվող որևէ երևույթի բարոյա-հոգեբանական հիմնավորման դեպքում կամ բարոյա-հոգեբանական նորմերը փաստերով ապացուցելու դեպքում:

Գործնական- կիրառվում է գործունեության տարբեր միջոցների ընդհանրացման դեպքում և այդ գործունեությունը նոր պայմաններում կիրառելիս:

Չայեցակարգային-որի դեպքում սովորողները զբաղվում են ուսումնական խնդիրների լուծման տարբեր միջոցների, գաղափարների, առաջարկների մշակմամբ:

Ինտեգրված դասերի տիպերը`

- **Չամակարգված** (Մի առարկայի գիտելիքները հիմնվում են մյուս առարկայի գիտելիքների վրա:) – Այդպիսի դասերին մասնակի անդրադարձ է կատարվում տարբեր ոլորտներում գիտելիքների ընդհանուր խնդիրներին:
- **Չամակցված**– նմանատիպ դասերը կառուցվում են մեկ նախաձեռնող առարկայի հիման վրա: Տեղի է ունենում մի քանի առարկաների միաձուլում մեկի մեջ, որը հնարավորություն է տալիս նույն խնդիրը հետազոտել տարբեր տեսանկյուններից:

Նախագծային – դասեր, որոնց ընթացքում , օգտագործելով գիտելիքներ տարբեր ոլորտներից, մշակվում է, թե ինչպես դիտարկել խնդիրը տարբեր տեսանկյուններից:

Խնդրի լուծումները ձևավորվում են, հենվելով կյանքի փորձի կամ տարածված սոցիալական խնդիրների ուսումնասիրությունների վրա: Աշխարհագրություն առարկան բնագիտության այն բաժիններից մեկն է, որն ամբողջությամբ ներծծված է միջառարկայական կապերով: Այս տիպի դասերը կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: ` օգտագործելով միջառարկայական կապերը: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ Այս թեմայի նպատակն է ընդգծել ինտեգրված ուսուցման նշանակությունը կրթության որակի բարձրացման գործընթացում, հատկապես բնագիտական առարկաների դասաժամերին ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը: Միջառարկայական կապերը դրդում են սովորողներին հետազոտական գործունեության, արթնացնում հետաքրքրություն առարկայի նկատմամբ Միջառարկայական կապերի օգտագործումը բարձրացնում է ուսուցման գիտականությունը, մատչելիությունը, ակտիվացնում

սովորողների իմացական գործունեությունը, մյուս կողմից ընդլայնում է ուսուցչի հնարավորությունները և նյութի բովանդակության և իմացական գործունեության կազմակերպման հարստացման առումով: Միջառարկայական կապերի օգտագործումը առավել դյուրին է դարձնում աշակերտների հետաքրքրությունների, աշխարհայացքի ձևավորման և այլ խնդիրների լուծում:

Ինտեգրված դասի խնդիրները

- Գիտությունների և արտադրության ինտեգրման մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերի պահպանումով: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած տեղեկություններով, այլ՝ իրականությունը, միջառարկայական կապերով: Ուստի դասապրոցեսի ընթացքում միջառարկայական կապերի պահպանումն ունի բազմաբովանդակ խնդիրներ՝ սկսած աշակերտների մոտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորումից, վերջացրած՝ աշակերտի մոտ ակտիվ մասնակցությունն ցուցաբերելու ցանկություն սերմանելուց: Ինտեգրված դասի նպատակները - Շատ կարևոր է ճիշտ որոշել, թե որ թեմաներից կարելի է կազմակերպել ինտեգրված դասեր, որտեղ կարող ենք պահպանել միջառարկայական կապեր, և որն է մեր դասի գլխավոր նպատակը: Մեր նպատակն է սովորողին ուղղորդել, սովորեցնել հետազոտել, ստեղծագործել, որոնել, դասը յուրացնել հետաքրքիր մեթոդներով:

Այսպիսով, ինտեգրված դասը դառնում է նաև գրավիչ դերախաղ, քննարկում, ոչ թե զուտ գիտելիքների ծավալի հաղորդում: Ինտեգրված դասի նշանակությունը – Միջառարկայական կապերի ստեղծումը աշխարհագրության դասաժամերին ունի բազմակողմանի նշանակություն: Այն ապահովում է աշակերտների բազմակողմանի զարգացում, հաղորդվող նյութի արագ և հեշտ յուրացում, աշակերտների մոտ հետաքրքրասիրության մեծացում, սեր առարկայի հանդեպ: Նմանօրինակ դասերը արթնացնում են աշակերտների մոտ աշխույժ մոտեցում ուսուցանվող նյութին և դասաժամը միօրինակ ու ձանձրալի չի անցնում:

Սեփական փորձառության ներկայացում

Սեփական փորձառությունից ելնելով կներկայացնեմ ինտեգրված դասի երկու օրինակ: Առաջին օրինակի ժամանակ ուսումնասիրել եմ փոքր թեմա, ցանկանալով ավելի խորը և մանրամասնորեն ուսումնասիրել նյութը: Բազմակողմանի և

Ընտրում ենք Սևանա լիճ թեման կազմում թեմատիկ միավոր:Ստեղծում ենք երկարաժամկետ 4 խումբ :

Առաջին խմբին (լեզվաբաններ)հանձնարարվում է բացատրել լճի անվան ծագումնաբանությունը,կարդալ լճի մասին բանաստեղծություններ,երգեր գրել ակրոստիքոսներ և այլն:

Երկրորդ խումբը (պատմաբաններ) հանձնարարվում է պարզաբանել լճի հետ կապված պատմական իրադարձությունները

Երրորդ խմբին (աշխարհագետներ) տալ լճի աշխարհագրական ակնարկ

Չորրորդ խմբին (բնապահպաններ) բացահայտու են լճի Էկոլոգիական կարիքները

Խմբերի յուրաքանչյուր անդամ նախապատրաստական փուլում աշխատում են համագործակցած իրար և տվյալ առարկայի ուսուցչի հետ:Տեղեկությունները կարող են վերցնել ցանկացած աղբյուրից,որը կհղկվի և կմշակվի ուսուցչի օգնությամբ:Կգծեն սխեմաներ ,կնկարեն նկարներ նաև լուսանկարներ,կպատրաստեն պաստառներ:

Դասը սկսվում է աշխարհագրության ուսուցիչը:հարցեր կառաջադրվի լճի մասին,ցույց կտան քարտեզի վրա,կհամեմատեն Հայկական Լեռնաշխարհի մյուս լճերի հետ :Մտազրոհը կարող է տևել 5-6 րոպե:Այնուհետև կներկայացնի կազմած խմբերի անդամներին:Յուրաքանչյուր անդամ ունի իր որոշակի դերը,թե ինչ պիտի ներկայացնի:Իմաստի ընկալումը կարող է տևել 25-30 րոպե ,քանի որ խմբերը բավական շատ բան ունեն ներկայացնելու:

Առաջին խմբին (լեզվաբաններ)- խմբի մի անդամը ներկայացնու է անվան ստուգաբանությունը,երկրորդ անդամը բանաստեղծություններ է արտասանում լճի մասին :Մյուս անդամը երգ է երգում:Չորրորդ աշակերտը գրում է ակրոստիքոսներ,օգտագործելով լճի հետ կապված անունները :

Երկրորդ խումբը (պատմաբաններ)-մի անդամը ներկայացնում է Սևանա թերակղզու եկեղեցիների պատմությունը:Մյուս անդամը ներկայացնում է պաստառ ,որտեղ ցույց է տալիս խաչքարերի, եկեղեցիների,պատմական այլ օբեկտների տեղաբաշխումը:Երրորդ անդամը տալիս է պատմական դեպքեր կապված լճի հետ:չորրորդ անդամը հնագիտական պեղումները Սևանի ափին:

Երրորդ խմբին (աշխարհագետներ) տալ լճի աշխարհագրական ակնարկ : Առաջին աշակերտ՝ ծագումնաբանությունը, երկրորդը՝ չափերը բարձրություն, խորություն, մակերես և այլն: Երրորդը՝ շրջապատող լեռները, չորրորդը

Նրա մեջ թափվող գետերը և ջրային հաշվեկշիռը: Այս ամենը ավելի պատկերավոր ներկայացվում է գծած պաստառի, քարտեզի, նկարների, տեսաֆիլմի միջոցով: Զորորդ խումբ (բնապահպաններ) առաջին աշակերտը ներկայացնում է թե որտեղից և ինչպես ծագեց Սևանի ճգնաժամը, մյուս աշակերտը՝ ներկայացնում է բուն ճգնաժամը , երրորդը՝ լճի աղտոտման ժամանակակից աղբյուրները, չորրորդը՝ Արփա-Սևան ջրատարի կարևորությունը սխեմայով, աղյուսակով:

Կշռադատման փուլում 7-8ր ուսուցիչը պետք է պարզաբանի միջառարկայական կապի կարևորությունը՝ ինչ գիտեի, ինչ իմացա, ինչ սովորեցի, ինչպես կօգտագործեմ հարցադրումներով: Կառաջարկվի աշակերտներին արտահայտել իրենց սեփական կարծիքը Սևանի պահպանության մասին: Ինչ կառաջարկեն լճի Էկոլոգիական վիճակը բարելավելու համար:

Տեսային առաջադրանք՝ գրել շարադրություն 'Սևանի կապույտ ջրեր' .վերնագրով

Այժմ կներկայացնեմ մեկ այլ ինտեգրված դաս, որը անցկացնում ենք բանավեճի միջոցով: Ուսուցիչները դաս-բանավեճը անցկացնում են իրար հաջորդելով (ադիտիվ): Այս ինտեգրված դասի միտքը ծագեց այն ժամանակ, երբ 10 –րդ դասարանում բացատրում էի կյանքի ծագումը երկրագնդի վրա: Աշակերտներից շատերը հակված էին կյանքի ծագման աստվածաշնչային տեսակետին: Բոլոր ժամանակների բանավեճը : Որն է ճիշտ գիտությունը, թե կրոնը Որոշեցի պարզաբանել ինտեգրված դաս-բանավեճ ձևաչափով: Համագործակեցի կենսաբանություն և եկեղեցու պատմության ուսուցիչիների հետ: Նպատակս այն էր աշակերտներին բացատրել ,որ կրոնը և գիտությունը գրեթե նույն բանն են ասում, միայն թե տարբեր կերպ: Պետք է որ գիտությունը և կրոնը քայլեն միասին: Այդ դեպքում մարդկությունը ավելի մեծ նվաճումների կհասնեն ,քան մինչև հիմա: Իզուր չէ ասված մեծն ֆիզիկոս Ալբերտ Այնշտայնը խոսքերը << Կրոնը առանց գիտության կույր է , իսկ Գիտությունը առանց կրոնի թևեր չունի>>: Դեռ ուսանող ժամանակ մեծն ֆիզիկոսը իր դասախոսի հետ բանավեճի ժամանակ ապացուցում է աստծո գոյությունը: Մեջբերման մեջ հստակ երևում է ,թե Այնշտայնը ինչպես է բացատրում աստծո գոյությունը բարու և չարի մասին արտահայտվելով. << Չարը գոյություն չունի, պարո՛ն, կամ, համեմայնդեպս, այն գոյություն չունի Նրա համար: Չարը պարզապես ԱՍՏԾՈՒ բացակայությունն է: Այն նման է խավարին և ցրտին. բառ է,

որն ստեղծվել է մարդու կողմից՝ Աստծո բացակայությունը բացատրելու համար: Աստված չի ստեղծել չարը: Չարը ո՛չ հավատ է, ո՛չ սեր, որոնք գոյություն ունեն, ինչպես լույսն ու ջերմությունը: Մարդու սրտում աստվածային սիրո բացակայությունն է չարը: Այն նման է ցրտին, որ հայտնվում է, երբ չկա ջերմություն, կամ խավարին, որ տիրում է, երբ չկա լույս>>:Այս պատմությունը ևս մի հանգամանք էր այս դաս -բանավեճը կազմակերպելու համար:Ի նպատակն էր զուգահեռներ անցկացնել կյանքի ծագման գիտական և աստվածաշնչային գաղափարների միջև և կարողանալ աշակերտների մոտ ստեղծել այն կարծրատիպը,որ երբեք չի կարելի գիտությունը և կրոնը հակադրել իրար այլ պետք է լրացնել մեկը մյուսով:Այս դասը կազմակերպելու համար ստեղծեցի 2 խումբ `աստվածաբաներ և գիտնականեր:Աստվածաբաների հետ աշխատում էր ՅԵՊ-ի ուսուցիչը ,գիտնակաների հետ կենսաբանության ուսուցիչը:

Աշխարհագրության ուսուցչի դերը կայանում է նրանում, որ պետք է բանավեճի ժամանակ այնպիսի լուծում տալ,որ երկու խմբերն էլ կհամոզվեն դրա ճշմարիտության մեջ:Ես ընգրկեցի երեք առանցքային հարց՝1.երկրագնդի առաջացումը,2.կյանքի առաջացումը,3.Նոյի ջրհեղեղը:Երկու խումբն էլ այս երեք հարցերին պետք է պատասխանեին իրենց տեսանկյունից,կարող էին օգտագործել տեսաֆիլմեր,պաստառներ,գրքեր,աստվածաշունչը ևայլ դիդակտիկ նյութեր,որոնք խոսքը ավելի ամբողջական կդարձնեն:Երկարաժամկետ խմբերը իրենց հավաքած նյութերը պետք է համակարգեին իրենց ղեկավարների հետ:խոսքը պետք է լիներ հստակ և համոզիչ:Դաս բանավեճը պետք է տևեր 90 րոպե:

<<Գիտնականեր >> խումբը սկզբում ներկայացրեց Արեգականային համակարգի այդ թվում մեր մոլորակի առաջացման տեսությունները՝Կանտ-Լապլասի,Ջինսի,Շմիդտի վարկածները:Նշեցին որ ամենահավանական վարկածը Շմիդտի երկնաքարային վարկածն է :Յետո գծեցին երկրաբանական աղյուսակը,ցույց տվեցին երկրակեղևի ձևավորման 5 դարաշրջանները,նշեցին որ կյանքը առաջացել է ջրում,զարգացել է և Կայնոզոյան դարաժրջանի վերջում ՝2 մլն տարի առաջ առաջացել է մարդը:ցույց տվեցին տեսաֆիլմ և երկրի առաջացման և մարդու առաջացման մասին:

<<Աստվածաբաներ>> խումբը ելույթ ունենալուց մեջբերեց աստվածաշնչի այն հատվածը ,երբ ասվում է որ Աստված ստեղծեց տիեզերքը և երկրագունդը 6 օրում,վեցերորդ օրվա երկրորդ կեսին ստեղծեց մարդուն:Ցուցադրվեց նկարներ ,տեսաֆիլմ:Բանավեճը գնում էր ըստ նախատեսած

հերթականությամբ: Ուսուցիչները դասը վարում էին իրար հաջորդելով (ադիտիվ): Աշակերտները ակտիվ բանավեճում էին: Բանավեճի հաշտեցման դերում հանդես եկավ աշխարհագրության ուսուցիչը: Չուզահեռ տարվեց 2 խմբերի տեսակետների միջև: Օգտվեց երկրաբանական աղյուսակից, բացատրեց, որ այն բաժանվում է 5 դարաշրջանների, եթե մոլորակի առաջացումն էլ հաշվենք մի դարաշրջան ապա կլինի 6, այսինքն դա այն 6 օրն է, որ Աստված ստեղծեց երկիրը: Համեմատեց նաև մարդու առաջացման ժամանակահատվածը: Կայնոզոյը ստացվում է 6-րդ դարաշրջանն է, որի վերջում 2-3 մլն տարի առաջ առաջացել է մարդը: Իսկ ըստ աստվածաշնչի Աստված 6-րդ օրվա վերջում ստեղծում է մարդուն: Եզրակացությունները թղթում են աշակերտներին: Այս տեսակետը լսելով աշակերտները սկսեցին արտահայտել իրենց տեսակետները: Նրանք ազատ արտահայտում էին իրենց կարծիքը, և սեփական եզրահանգումները:

Բանավեճի երկրորդ փուլ՝ կյանքի ծագումը, մարդու առաջացումը: Նորից խմբերը արտահայտվեցին, բերեցին փաստարկներ:

<<Գիտնականեր >> խումբը բերեցին կյանքի ծագման մասին գիտական վերլուծությունը, որ կյանքը առաջացել է ջրում, անօրգանական նյութից առաջացել է օրգանական նյութ: Որպես ապացույց բերվեց Օպարինի տեսությունը: Օպարինը գտնում էր, որ Երկրի վրա կյանքի ծագման ճանապարհին առաջին քայլը եղել է անօրգանական նյութերից օրգանական մոլեկուլների ոչ կենսաբանական (աբիոգեն) սինթեզը: Համաձայն այդ վարկածի կյանքն առաջացել է Երկրի վրա Էվոյուցիայի փուլերից մեկում անօրգանական՝ այսինքն անկենդան մատերիայից: Ըստ Օպարինի Երկրի վրա կյանքի առաջացման գործընթացը կազմված է 3 փուլից՝

- Օրգանական նյութերի առաջացում,
- Կենսապոլիմերների (սպիտակուցներ, նուկլեինաթթուներ, պոլիսախարիդներ և այլն) կազմավորում առավել պարզ օրգանական նյութերից,
- Պարզագույն ինքնավերարտադրվող օրգանիզմների առաջացում:

Ամերիկացի գիտնական Ստենլի Միլլերը զբաղվում էր կյանքի առաջացման վարկածների փորձարարական ստուգմամբ: 1955 թվականին Ս. Միլլերը նախագծեց մի սարք, որտեղ Օպարինի տեսության հիման վրա սինթեզում է օրգանական նյութ: Այս բոլորը ցուցադրվեց տեսաֆիլմով և նկարներով:

<<Աստվածաբաներ>> խումբը բերեց իր փաստարկները հատված վերցնելով սուրբ գրքից . <<արարման վեցերորդ օրվա վերջում Աստված ստեղծեց մարդուն՝ իր կերպարով և նմանությամբ, ստեղծեց նրան հողից և նրա մեջ շունչ փչեց>> [ԹՄ. 1.26](#)]:

Բուն բանավեճը նորից ընդհատեց աշխատագրության ուսուցիչը ,տարավ զուգահեռներ :Բացատրենք Աստվածաշնչի տեսակետը ,ինչ է ասում ,որ հողից՝անօրգանական նյութից աստված ստեղծեց Ադամին ,նրա մեջ շունչ փչեց կարելի է դիտել արդեն որպես կենդանի մարդ .այսինքն օրգանական նյութ:Ուրեմն ստացանք հետևյալ պատկերը Աստված անօրգանական նյութից՝հողից ստեղծեց օրգանական նյութ՝Ադամին :Սա նույն տեսակետն է ինչ որ պնդում էին գիտնականները:Եզրակացությունը թողնում ենք աշակերտներին:Կարծես թե այս տեսակետը որոշ փոփոխություն մտցրեց աշակերտների աշխարհընկալման մեջ:

Երրորդ Նոյի ջրհեղեղի փաստարկը բերեցին <<Աստվածաբաները>>

Նոյի պատմությունը ներկայացվում է Ծննդոց գրքի 6–9 գլուխներում, որտեղ նա ջրհեղեղից փրկում է իր ընտանիքը և կենդանիների բոլոր տեսակներին՝ կառուցելով [Նոյյան տապանը](#): Նա նաև հիշատակվում է որպես «առաջին այգեգործը» և «առաջին գինեգործ»: Նոյը նաև բազմիցս հիշատակվում է [Ղուրանում](#):Վերահաս ջրհեղեղից փրկվելու համար, Աստծու հրահանգով և օգնությամբ, Նոյը կառուցում է եռահարկ նավ՝ տապան, և երբ սկսվում է ջրհեղեղը, նա կնոջ, 3 որդիների ([Սեմ](#), [Քամ](#), [Հաբեթ](#)) ու նրանց կանանց հետ մտնում է տապան՝ իր հետ վերցնելով նաև երկրի բոլոր ցամաքային կենդանի արարածներից ու թռչուններից մեկական զույգ՝ արու և էգ, իսկ «մաքուր» կենդանիներից 2-ական զույգ՝ Աստծուն զոհ մատուցելու համար: Երկրորդ ամսի 27-ին ժայթքում են ստորգետնյա բազում աղբյուրներ, բացվում են երկնքի ջրվեժները, երկրի վրա 40 օր ու գիշեր անձրև է տեղում, ջուրը բարձրանում է և 150 օր ծածկում ցամաքը՝ ոչնչացնելով չարացած մարդկանց ու անմեղ անասուններին:Երբ ջուրն սկսում է կամաց-կամաց հետ քաշվել, Նոյի տապանը հանգրվանում է Արարատ (Մասիս) լեռան վրա. դրա համար էլ Արարատ լեռն ընկալվում է որպես մարդկության փրկության խորհրդանիշ:

Հայ եկեղեցին Էջմիածնի Մայր տաճարում ,որպես սուրբ մասունք,պահում է Նոյյան տապանից փայտի մի կտոր.այն,ըստ ավանդության ,Մասիսի լանջին հրեշտակից ստացել է Մծբին քաղաքի եպիսկոպոսը՝սուրբ Հակոբ Մծբնացի հայրապետը:

<<Գիտնականներ >> խումբը բերեց իր փաստարկները ջրհեղեղի վերաբերյալ: Օգտվելով երկրաբանական աղյուսակի վերլուծությունից բացատրեցին որ Կայնոզոյան դարաշրջանի ընթացքում եղել է 4 սառցապատում: Այդ ժամանակ երկրի մակերևույթը ծածկվել է սառցե հաստ շերտով: Միջսառցադաստային ժամանակահատվածում ,երբ երկրագնդի կլիման տաքացել է սկսել են հալվել սառցադաշտերը: Բարձրացել է օվկիանոսի մակարդակը, օդից անջատվել է հսկայական քանակության ջրային գոլորշիներ, թափվել և ներքև ինչպես անձրև: Այսպիսով, համաշխարհային ջրհեղեղի առասպելը կարող է ծնվել բազմաթիվ ջրհեղեղների և աղետների արդյունքում, որոնք այնքան հարուստ են մեր մոլորակի պատմության մեջ: Ի դեպ, գիտնականները շատ են վիճել, թե կոնկրետ երբ է տեղի ունեցել Ջրհեղեղը: Անգլիացի Ջոն Վուդվորդը իր «Երկրի բնական պատմությունը» գրքում ասել է, որ Երկրի շերտերից մեկում գտել է բրածո ընկույզներ: Եվ այդ ընկույզները չհասած էին: Այսպիսով, նա եզրակացրեց, որ ջրհեղեղը տեղի է ունեցել զարնան վերջին: Ծառերի վրա պտուղներն արդեն ձևավորվել են, բայց դեռ չեն հասունացել:

Ջորջ Սմիթը, բրիտանական աստրաբանության ռահվիրաը, զարմացած աշխարհին հայտարարեց, որ Նինվեի Աշուրբանապալի գրադարանի բազմաթիվ սեպագիր տախտակների մեջ հայտնաբերել է ջրհեղեղի պատմություն, որը զարմանալիորեն նման է աստվածաշնչյան լեգենդին: «Ջրհեղեղի» ջրերը ռեյիեֆի մորֆոլոգիայում թողել են իրենց դիսամիկայի հստակ հետքեր՝ ծովային տեռասներ, հատուկ ավամերձ գծեր, հարթ հատակի տեղագրություն, ինչպես նաև ջրհեղեղի արտանետման ուղիների երոզիոն-կուտակային ռեյիեֆային ձևեր. Մանչ-Կերչի նեղուց, Բոսֆորը և Դարդանելի գետերը: Մեկ ուրիշ վարկածով տեղի է ունեցել Բևեռների փոփոխություն: Սակայն ոչ բոլոր գիտնականներն էին համաձայնվում, որ աշխարհը մեր մոլորակի վրա փոխվել է միայն ջրհեղեղի արդյունքում: Թե աշխարհագրական բևեռները կտեղաշարժվեն, իսկ առանցքի դիրքը՝ ոչ, (ինչպես, օրինակ, Պ. Շուլցը և Ա. Սկյարովը), դրանից աղետալի հետևանքներ կլինեն: Այդ ժամանակ օվկիանոսի ջրի հզոր ալիքները կծածկեին երկրագունդը:

Այս բանավեճի արդյունքում երկու խմբերն էլ եկան այն եզրակացության, որ ջրհեղեղ եղել է ,դա պնդում են նաև գիտնականները: Եվս մի անգամ էլ համոզվեցինք, որ կրոնը և գիտությունը նույն տեսակետը ունեն , ուղղակի տարբեր ձևով են մեկնաբանում:

Ամփոփիչ փուլում լսեցին երեխաների կարծիքը այ ամենի վերաբերյալ: Պատասխաններից հասկացանք, որ աշակերտները ունեն իրենց

դիրքորոշումը նյութի վերաբերյալ, փոխվել է իրենց աշխարհընկալումը: Նրանք արդեն ուրիշ տեսանկյունից էին նայում տրված թեմային: Նրանք վերցրեցին գրականության ցանկ, որտեղ ավելի մանրամասն կարող են գտնել իրենց հարցերի պատասխանները:

Այս դասին դրված նպատակը կատարվեց, մենք հասանք այն վերջնարդյունքին, ինչին որ ձգտում էինք: Աշակերտները լիարժեք արտահայտեցին իրենց կարծիքը, քննարկեցին նյութը: Նրանք անկաշկանդ կարողանում էին արտահայտվել իրենց մտքերը, հակադրվել, համոզվել և ձեռք բերել սեփական կարծիք: Նրանց մոտ ձևավորվեց որոշակի աշխարհայացք, որը կօգնի մարդուն ավելի հիմնավոր գիտելիք ձեռք բերելու:

Եզրակացություն

Այսպիսով մենք անցկացնելով ինտեգրված դաս բարձրացրեցին աշակերտների հետաքրքրվածությունը ուման նկատմամբ: Տվեցինք լայնածավալ և խորը գիտելիքներ, որոնք կօգտագործեն կյանքի ընթացքում: Դասի կազմակերպման ընթացքում ապահովեցինք ժամանակակից դասի դիդակտիկ պահանջները, դիդակտիկ նպատակի հստակ ձևակերպումը, դասի նպատակներին և ուսումնական ծրագրին համապատասխան դասի լավ օրինակ, բովանդակության սահմանում հաշվի առնելով աշակերտների պատրաստվածության և պատրաստվելու մակարդակները: Աշակերտների կողմից գիտելիքների յուրացման մակարդակի, կարողությունների և հմտությունների ձևավորման կանխատեսում, ինչպես դասի այնպես էլ դասի տարբեր փուլերի ընթացքում: Դասի յուրաքանչյուր փուլի վրա լավագույնս ազդող դասավանդման առավել ռացիոնալ մեթոդների, հնարների, միջոցների ընտրություն: Դասապրոցեսում սովորողների առավելագույն ինքուրույնության և դասի ժամանակ անհատական ու խմբային աշխատանքների տարբեր ձևերի հետ համադրված ճանաչողական ակտիվության ապահովում: Դասի ժամանակ բոլոր դիդակտիկ սկզբունքների իրագործում, աշակերտների ուսումնառության լավագույն պայմանների ստեղծում:

Ինտեգրված դասի ժամանակ պետք է բավարարել դասի հոգեբանական պահանջները: Դրանք են . Աշակերտների զարգացումը պլանվորել կոնկրետ դասի և կոնկրետ ուսումնական առարկայի սահմաններում: Արդյունքների և թեմայի յուրացման հոգեբանական խնդիրների ներառում դասի նպատակի

ենթատեքստում: Կիրառելի աշակերտների զարգացումն ապահովող առանձնահատուկ հոգեբանամանկավարժական միջոցներ, մեթոդական հնարներ:

Ինտեգրված դասը պետք է լինի զգացմունքային, հետաքրքրությունն առաջացնի ուսման նկատմամբ, դաստիարակի գիտելիքներին պահանջարկ: Դասի ընթացքում աշակերտների և ուսուցչի գործողությունները պետք է ավարտուն լինեն, ուսուցիչ աշակերտ փոխհարաբերություններում պետք է լիարժեք շփում լինի: Պետք է պահպանվի մանկավարժական տակտը և մանկավարժական լավատեսությունը: Դասի ընթացքում պետք է տիրի բարի կամքի դրսեվորման և ակտիվ ստեղծարար աշխատանքի մթնոլորտ: Հնարավորության սահմաններում հարկ է փոխել աշակերտների գոծունեության տեսակետները, լավագույնս համադրել դասավանդման տարբեր մեթոդները և հնարները: Ուսուցիչը պետք է ապահովի յուրաքանչյուր աշակերտի ակտիվ ուսումնառությունը:

Գրականություն.

1. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.
2. 1. Մելանյա Աստվածատրյան, Անահիտ Արնաուդյան, Սիրամարգ Վարդումյան, Իզաբելա Օհանովա, Ռուբեն Պետրոսյան, Լենա Երեմյան, «Ինտեգրված թեմատիկ միավորներ», Երևան, 2003թ., 256 էջ:
3. 3. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012:

